



ԵՐԶԱՆԿԱՀԻՇԱՏԱԿ ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ
ԾՆՆԴՅԱՆ 150-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ
ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Լրացավ երջանկահիշատակ Ամենայն Հայոց կաթողիկոս Ս. Տ. Մկրտիչ Ա խրիմյանի ծննդյան 150-ամյակը:

Դեռևս անցյալ՝ 1970 թվականի նոյեմբեր ամսին ազգիս Վեհափառ Հայրապետը խրիմյան Հայրիկին նվիրված Իր կոնդակում գրում էր.

«Գրելու համար Հայրիկի մասին, պետք է գրիչը թաթխել հայ ժողովուրդի հույզերու և երազանքներու ավազանին մեջ, զի Ս. Տ. Մկրտիչ խրիմյան Հայրապետը, համայն հայության գիտակցության մեջ, շատուց ի վեր փառավորված է անթառամ լուսապսակով՝ իբրև անձնդիր քաջ Հովվապետ, իբրև Դաստիարակ հայ շինականի, իբրև Նվագող հայոց դարավոր վշտի, իբրև Ռաֆիկրա հայրենյաց ազատության: Անոր ոգին կսավառնի այսօր այ հայոց աշխարհի երկնակամարին ներքև, հավատք և հույս ներշնչելով մեր ժողովուրդին, լուսավոր նոր հորիզոններ բացելով դեպի ապագան»:

Սույն կոնդակով Հայոց Հայրապետը հորդորում է Հայաստանյայց բոլոր եկեղեցիներում հանդիսավոր հոգեհանգստյան պաշտոն կատարել և լուսապսակ Հայրիկի անունը ու գործը պանծացնել:

Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Հունվարի 24-ին, կիրակի օրը, առավոտյան ժամը 11-ին, Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Մուշեղ վրդ. Պետիկյանը: «Հայր մեր»-ից առաջ Մայր տաճարի Ավագ սեղանից, հանդիսավորապես, արծ. տ. Հովհաննես քհն. Մարությանն ընթերցում է ազգիս Վեհափառ Հայրապետի՝ Ս. Տ. Մկրտիչ Ա կաթողիկոս խրիմյանի հիշատակին նվիրված կոնդակը:

Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայրապետը եկեղեցական թավորով առաջնորդվում է Մայր տաճարի զանգակատան հարավ-արևմտյան կողմում գտնվող խրիմյան Հայրիկի շիրիմը և նախագահում հոգեհանգստյան արարողությանը:

Ս. պատարագին, ինչպես նաև հոգեհանգստյան արարողությանը ներկա էին բազում ուխտավորներ ախյուրքից և Հայաստանի տարբեր շրջաններից:

ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ
ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Նույն օրը, երեկոյան ժամը 18-ին, Վեհափառի հանդիսությանց դահլիճում տեղի է ու-

ներում հոբելյանական հանդիսություն, Վե-
հափառ Հայրապետի բարձր նախագահու-
թյամբ, նվիրված Մկրտիչ Ա. Խրիմյան Հայ-
րիկի կյանքին և գործունեությանը:

Հանդիսությունը ներկա են լինում շուրջ
350 հրավիրյալներ, այդ թվում՝ Գերագույն
հոգևոր խորհրդի և Վերստուգիչ հանձնաժո-
ղի անդամները, Մայր Աթոռի միաբանու-
թյունը, հոգևոր ճեմարանի դասախոսական
կազմը, մայրավանքի պաշտոնեությունը,
մտավորականներ, արվեստագետներ:

Հոբելյանական հանդիսությունը ներկա էր
նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առըն-
թեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախա-
գահ Ս. Գասպարյանը:

Հանդիսությունը սկսվում է «Հայրապե-
տական մաղթանք»-ի նվագով, որը երգեհո-
նի վրա կատարում է Լևոն Աբրահամյանը:

Բացման խոսքով հանդես է գալիս Մայր
տաճարի լուսարարապետ տ. Հայկազուն
արքեպ. Աբրահամյանը, հակիրճ և բովան-
դակալից խոսքով դրվատում է Հայոց Հայրի-
կի ազգօգուտ գործունեությունը:

«Խրիմյան Հայրիկի կենսագրությունը գրելը
հավասար է թանգարանի մը բացմանը, ո-
րում բազմաթիվ ցուցափեղկերում մեջ հըս-
տակորեն տեսնվին Խրիմյանը որպես Կրո-
նական մարդը, որպես մեր ազգին ճակա-
տագիրը վարող քաղաքական Գործիչ, որ-
պես Գրագետ ու Պատմաբան, որպես ժողո-
վրդդանվեր, անձնդիր Հայր, ու որպես հայ
գյուղացու ու մշակի խորհրդատու Առաջնորդ
մը»,—ասում է արքագանը:

Օրվա գլխավոր բանախոսն է Գերագույն
հոգևոր խորհրդի անդամ, բանասիրական
գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Առաքել
Առաքելյանը, որն իր բովանդակալից զե-
կուցման մեջ ասում է.

ԶԵԿՈՒՑՈՒՄ

«19-րդ դարի հայ կյանքը նշանավորվում
է մի շարք փայլուն դեմքերով և մտքի կար-
կառուն ներկայացուցիչներով: Մտքի այդ
շողոշողուն աստղերից մեկն է Մկրտիչ Ա.
Խրիմյան Ամենայն Հայոց կաթողիկոսը:

Ո՞վ է Խրիմյանը: Հայ ժողովրդի փառա-
շուք պատգամախոսը, նրա լավագույն իղձե-
րի ու տրամադրությունների վսեմաշուք
սրնգահարը:

Խրիմյանը դարաշրջանի հայ եկեղեցական
գործիչների, մտքի մշակների մեջ եղել է ա-
մենից հեղինակավորը, ամենաճանաչվածը,
ամենահարգվածն ու ամենասիրվածը: Այդ
ժամանակաշրջանը հայ իրականության մեջ
իրավամբ կարելի է անվանել Խրիմյանի
ժամանակաշրջան: Խրիմյանը անսահման ու
անշահախեր սիրով սիրել է հայոց աշխարհը,
հայ ժողովրդին, տառապել նրա վշտերով ու

ցավերով և իր ողջ կյանքը նվիրել նրան,
նրա խոշտանգված իրավունքների պաշտ-
պանության, նրա հոգևոր, նյութական ու
բարոյական մակարդակի բարձրացմանը:

Խրիմյան Հայրիկին ճանաչում էին և՛ մտա-
վորականները, և՛ հայ ժողովրդի բոլոր խա-
վերը, թե՛ Հայաստանում և թե՛ սփյուռքում,
գյուղացի թե քաղաքացի: Խրիմյանին ոչ
միայն ճանաչում էին, այլև հարգում ու սի-
րում, ակնածում ու խոնարհվում նրա մեծ
անվան ու անքասիր անձնավորության ա-
ռաջ: Հայ ոչ մի գործիչ առ այսօր չի արժա-
նացել այնպիսի շոյիչ մակդիրի, որպիսին է
«Հայրիկ» անունը, որով ժողովուրդն արտա-
հայտել է իր անսահման սերը և երախտագի-
տության բուռն զգացմունքը:

Խրիմյանի «մեջ կար մոգական մի ուժ»,—
գրում է մեր այժմյան Վեհափառ Հայրապե-
տը, 1943 թվականին հրատարակած իր գրք-
րում:—«Հասկնալու համար Խրիմյանի՝ մեծ
դաստիարակին մոգական ուժը ու այն խոշոր
ազդեցությունը, զոր ունեցած է, հարկ է հի-
շել իր մեկ ուրիշ հիմնական հատկանիշը, որ
Խրիմյանին կուտա առաքյալի շունչ, մարդոց
հոգիներեն ներս թափանցելու ու փոթորկե-
լու անսահման կարողություն: Այդ իր բա-
նաստեղի զգայությունն է, զոր քիչ մանկա-
վարժներու տրված է» (էջ 14):

Խրիմյանը ծնվել է 1820 թվականի ապրի-
լի 4-ին Վանի Այգեստան թաղամասում,
չքավոր ընտանիքում: Այդ օրերին հայ
կյանքի մեջ տիրում էին ծայրահեղ աղքա-
տություն, թշվառություն, տգիտություն, սնա-
հավատություն: «Ժողովուրդը, որ նստել է
խաւարի և ի ստուերս մահու», այդ էր հայ
ժողովրդի ընդհանուր վիճակը 19-րդ դարի
Արևմտյան Հայաստանում:

Փրկության ոչ մի հույս չկար: Ընդհանուր
հուսալքումը տիրել էր ամենքին: Խրիմյանին
ժամանակակից հայ տաղանդավոր բանաս-
տեղծը՝ Մկրտիչ Պեշկոթաշյանը, դառնու-
թյամբ երգում է հայ ժողովրդի անհույս ա-
պագան.

«Գոց են ամպով աստղունք և հույս.

Դեռ շա՛տ հեռու է արշալույս»:

Եվ արշալույսը չծագեց հայ ժողովրդի հա-
մար: Այդ էր իրադրությունը թուրքական Հա-
յաստանում, երբ Վասպուրականը կյանքի
կոչեց հանճարեղ մանկանը:

Տարրական գրագիտություն սովորելով իր
հայրենի քաղաքում, 20 տարեկան Խրիմյա-
նը հեռացավ իր ծննդավայրից և անցավ
Պարսկաստան, այնտեղից Մերեջան Հայաս-
տան և ապա հասավ Պոլիս: Պոլիսը հայկա-
կան մտավոր կենտրոնն էր. այստեղ էր հա-
մախքված արևմտահայ բարձր մտավորա-
կանությունը: Խրիմյանը կապ է հաստատում
այս մտավորականների հետ, իրեն նվիրում

ընթերցանության և ինքնակրթությանը ընդ-
լայնում իր մտքի հորիզոնը և 1847 թվականին
ստանում է ուսուցչի պաշտոն, ապա
1850 թվականին հրատարակում «Հրախի-
րակ երկրին Արարատայ» հայրենասիրական
քերթվածը: Ցոթ գլխից բաղկացած մի քերթ-
ված է այն՝ շարադրված հայկական տաղա-
շափությանը: Խրիմյանը կոչ է անում պան-
դուխտ հայերին վերադառնալ հայրենիք,
ցուցադրում է հայրենի երկրի գեղեցկություն-
ները, նկարագրում է Արարատյան աշխար-
հը, Անին, Վաղարշապատը, Օշականը և Հա-
յաստանի այլ վայրերը:

«Արիական հոգին ի մեզ, ա՛հ մեռել է և
չէ ի կեանս.

Ո՛վ զոգի նախնի քաջաց նոր դարձուցե
յորդիս յետին:

Հրաման տուր Մշոյ քարանց, թող նոր
յառնեն Մուշեղք, Վահանք,

Հրաման տուր Աշտիշատայ, թող ի շիրմեն
եյցե Սահակ,

Հրաման տուր Հաղիկ գիւղէն, թող բուսա-
նի Մեարոյսայ հասկն»:

Այս 1850 թվականին մեկնում է Երուսա-
ղեմ, այստեղ 1851-ին հրատարակում երկ-
րորդ քերթվածը՝ «Հրախիրակ երկրին Անե-
տեաց», որում նկարագրում է Քրիստոսի
կյանքն ու քարոզչությունը, սրբազան ուխ-
տավայրերն ու աստվածակոխ սրբատեղի-
ները:

1852-ին այցելում է Կիլիկիա և մի տարի
հետո վերադառնում Վան, 1854-ին ձեռնա-
դրվում է վարդապետ Աղթամարի վան-
քում:

Խրիմյանը որպես հոգևորական կոչ էր ա-
նում հոգևորականությանը՝ նվիրվել հայ ժո-
ղովրդի բարոյական, կրթական ու տնտեսա-
կան մակարդակի բարձրացմանը, հորդորում
էր կազմակերպել դպրոցներ՝ տղաների ու
աղջիկների համար:

Խրիմյանը 1855-ին գտնվում է Կոստանդ-
նուպոլսում: Նա արդեն վայելում էր մեծ
հեղինակություն հայ հասարակության և հո-
գեվորականության շրջանում: Քաջ ըմբռնե-
լով մամուլի կրթիչ նշանակությունը և նրա
դերը հասարակության դաստիարակության
գործում, մայրաքաղաքում հրատարակում է
«Արծուի Բիզանդիոնի» թերթը: Խրիմյանը
թերթի, ինչպես և իր ելույթների մեջ բա-
ցատրում էր ուսման բարձր նշանակությունը
և հորդորում բազմացնել դպրոցների թիվն
ու տարածել գիտությունը և ուսումը ժողո-
վրդի մեջ:

1856 թվականին նշանակվում է Վարազա
վանքի վանահայր: Խրիմյանին չէր գրավում
մայրաքաղաքի աղմկոտ կյանքը: Նա սի-
րում էր գավառը, գավառական ժողովրդի
կյանքը և ձգտում էր բարձրացնել այն տա-

րածելով նրա մեջ ուսում և գիտություն: Ել
Վարազա մեհնաստանը կենդանանում է ու
դառնում ուսման ու գիտության դարբնոց:
Խրիմյանը ձեռք է բերում տպարան և 1858
թվականին հրատարակում «Արծուի Վա-
սպորականի» թերթը, որի խմբագիրն էր ին-
քը: Նա վանքում կազմակերպում է դպրոց և
շրջակա գյուղերից հավաքում պատանիներ,
որոնք ապրում էին և սնվում դպրոցում ու
ստանում ուսում: Խրիմյանը բացի գրագի-
տությունից երեխաների համար անհրաժեշ-
տություն էր համարում նոր մեթոդով հողի
նշակությունն իմանալը: Այդ նպատակով նա
ձեռք է բերում նաև գույքան և աշակերտե-
րին սովորեցնում հողի մշակությունը նոր
գործիքով:

Վարազա վանքը և «Արծուի Վասպորա-
կանի» հրատարակությունը է՛լ ավելի են
բարձրացնում Խրիմյանի համբավը: Բաֆ-
ֆին «Կայծեր»-ի մեջ վառ գույներով նկա-
րագրում է Վասպորականի Արծուի գոր-
ծունեությունը, նրա նվիրվածությունը հա-
ժողովրդին: Թերթը մեծ ընդունելության ար-
ժանացավ ողջ հայության մեջ, Արևելյան
Հայաստանում, Արևմտյան Հայաստանում և
Պարսկաստանում: Թերթը հայրենասիրա-
կան հոդվածներով ու քերթվածներով ծանո-
թացնում էր հայ ժողովրդին հայի պատմա-
կան անցյալի հետ, ընթերցողի մեջ վառում
սերը առ հայրենիքը, պայքարում պանդլիս-
տության դեմ, դառնությանը նկարագրում
պանդլիստությունը:

Վարազա վանքի դպրոցի սաներն են եղել
Գարեգին Սրվանձությանը, Արսեն Թոխմախ-
յանը և հայրենասիրությանը վառված աշ-
խարհական ու հոգևոր գործիչներ ու մտա-
վորականներ:

1862 թվականին ընտրվում է Տարոնի ա-
ռաջնորդ և տեղավորվում է Մուշ: Խրիմյա-
նը միաժամանակ գրչի մարդ էր: Առաջնոր-
դական-վարչական աշխատանքի հետ 1863
թվականին հրատարակում է թերթ՝ «Արծուի
Տարոնոյ» անունով իր նախաձեռնությամբ
կազմակերպված տպարանում:

1868 թվականին ձեռնադրվում է եպիսկո-
պոս՝ Գևորգ Դ կաթողիկոսի ձեռքով և 1869
թվականին ընտրվում պատրիարք: 1873
թվականին հրաժարվում է այդ պաշտոնից՝
այսպես պատճառաբանելով իր հրաժարա-
կանը. «Իմ հրաժարելուս առաջին պատճառը
ձանձրությունն և հուսահատությունն է. գոր-
ծելու համար եկա և բան մը չգործեցի»:
Հրաժարվելով պատասխանատու այդ աշ-
խատանքից, Խրիմյանն անձնատուր է լինում
գրական աշխատանքի:

1878 թվականին մեկնում է Բեդլին՝ որ-
պես ղեկավար ազգային պատվիրակության:
Վերադառնալով Պոլիս, ընտրվում է Վա-

պորտականի առաջնորդ և մեկնում վաճ 1880 թվականին՝ վարելու առաջնորդական պաշտոնը։ Այդ աշխատանքը վարում է մինչև 1885 թվականը։ Թուրքական կառավարությունը անհանդուրժելի համարելով նրա ներկայությունը վաճում, 1885 թվականին հեռացնում է պաշտոնից։

1890 թվականին Խրիմյանն աքսորվում է Երուսաղեմ։ Այնտեղ նա մնում է մինչև 1892 թվականը։ Նույն թվականի մայիսի 5-ին ընտրվում է Ամենայն Հայոց կաթողիկոս և 1893 թվականի սեպտեմբերի 26-ին ս. Էջմիածնում օծվում։

1907 թվականի հոկտեմբերի 29-ին (նոյեմբերի 11-ին) Խրիմյանը կնքում է իր մահկանացուն և թաղվում Մայր տաճարի գավթում։

Այս հարգելի բանախոսը մանրագնին կանգ է առնում Խրիմյան-մտավորականի ստեղծագործությունների վրա, թվում է նրա երկերի ցանկը և ցույց տալիս նրանց կատարած մեծ դերն ու նշանակությունը 19-րդ դարի հայ եկեղեցական, հասարակական մտքի ձևավորման և զարգացման գործում։ Խրիմյան Հայրիկը մասնավոր սեր ու հարգանք է ունեցել շինականի, գործավոր մարդկանց նկատմամբ և ձգտել է հայ գյուղացուն սիրել տալ, կապել հայրենի հողին, որը ըստ իրեն կյանքի արդար, միակ ճշմարիտ աղբյուրն է։ Այս կապակցությամբ հարգելի պրոֆեսորը վերլուծում է երջանկահիշատակ Հայրապետի հատկապես երկու գործերը՝ «Պապիկ և Թոռնիկ»-ը և «Սիրաք և Սամվել»-ը։ Խրիմյան Հայրիկն իր ժողովրդին հորդորում է չբաժանվել հայրենի սրբություններից, հողից, հակառակ դեպքում ամեն ինչ մահվան է հավասար։

Այնուհետև օրհնության խոսքով հանդես է գալիս ազգիս Վեհափառ Հայրապետը և աւում։

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ

ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ

«Երանելի է այդ որ համբերիցէ փորձանաց, զի եթէ ընտիր ևս գտանիցի, առցէ գպսակն կենաց՝ գոր խոստացան սիրելեաց իւրոց» (Յակոբ առաք. Ա. 12)։

Մկրտիչ Խրիմյան կաթողիկոսը Ամենայն Հայոց, անցնելուց հետո կյանքի բազում փորձություններից, Աստուծո և ժողովուրդի դատաստանի առաջ, մինչև իր կյանքի վերջը մնաց որպես ճշմարիտ «այդ երանեալ», անխառնորեն ընտիր ու պայծառ մի անձնավորություն, որ արժանի դարձավ հավերժական կենաց պսակին։ Օրհնություն իր հիշատակին։

Գուցե կարելի չէր ավելի երջանիկ ձևով կատարել փակումը Հայաստանի վերա-

ծննդյան հիսնամյա տոնակատարությանը, քան ոգեկոչումովը Խրիմյան Հայրիկի, Հայոց Հայրիկի։

Հայ ազատագրական շարժումին մասնակցող, հոգևորական դասի կենտրոնում, տեսնում ենք կանգնած՝ հզոր ու կախարդիչ կերպարը Վասպուրականի Արծիվին։ Մկրտիչ Խրիմյան կաթողիկոս, հավատավոր ու անձնվեր մի հոգի, բառին ամենահարազատ իմաստովը՝ քաջ հովիվ և բարի դաստիարակ և խիզախ առաջնորդ, քաղցրորեն հմայիչ ու վեհաշուք, դարձավ համաժողովրդական պաշտամունքի առարկա։ Ոչինչ ունենալով, ամեն ինչ ունեցավ։

Վերջին հարյուրամյակի ընթացքին, մեր եկեղեցին ունեցել է բազում արժանավոր հոգևոր սպասավորներ, հմուտ և գիտուն դեմքեր, մեծարվեստ քարոզիչներ, ստեղծագործ մտքեր, հայրենակներ գոշծիչներ, սակայն Խրիմյան Հայրիկի հիշատակը պահպանվել է առավել համազգային լուսապսակով։

Երբ 1948 թվին, հոգևոր կոչում ստացանք, Մեր նախկին սկսուտ եղբայրները Մեզի նվիրեցին Խրիմյան Հայրիկի մեծադիր մեկ նկարը, որի ներքև գրել էին՝ «Խրիմյան Հայրիկը առաջնորդ քեզ»։

Հիշում ենք նաև, երբ կաթողիկոս ընտրվեցանք և թափորով Մայր տաճարից դուրս էինք գալիս, հավաքված ժողովուրդից մի համեստ ծերունի շինական, մոտեցավ և արցունքը աչքերին ասաց. «Խրիմյան Հայրիկս եղևիս»։ Մեծագույն մաղթանքն էր ուղղվալ նորընտիր երիտասարդ կաթողիկոսին։

Մեր ժողովուրդի գիտակցության առջև, հոգևորականի արժանավորության գերագույն չափանիշը հանդիսանում է Խրիմյան Հայրիկը։ Ապահովաբար, պատահական երեւոյթ չէ այս։ Ժողովուրդը և ժամանակը երբեք չեն սխալվում։ Ամեն բանից վեր, մեր ժողովուրդը տեսավ ու զգաց թե մեծ Վասպուրականցին իր սրտին մեջ ծրարած ամբողջ ծանրությունը հայոց վշտին, եղավ ոչ միայն ողբացող մի երգիչ, այլև հույսի ջահը վառ պահած, մարտի հրավեր կարդացող մի առաքյալ, որ կտառապի առանց վհատելու, որ կմարտնչի առանց երկյուղի, որ կհավատա սուրբ արդարության և գալիք փրկության։

Ծանոթ վեհաժողովեն իր վերադարձին, Խրիմյան Հայրիկ, ժողովրդին հայտնել էր թե այնտեղ, իր ձեռքի շերտեր թղթից էր։ Գուցե շերտից, այդ պահին, այդ թղթից էր, սակայն թղթից չէր Խրիմյանի ոգին։ Նրա ոգին, ամուր ու անկոտրում պողպատից էր, ավելի ամուր ու անկոտրում քան ուրիշների երկաթյա կարծեցյալ շերտիցները։ Այդ պողպատյա ոգին, բուն հայ ժողովուրդի ոգին էր

և կամքը՝ հայրենիք մը ունենալու և խաղաղ ու ազատ ապրելու, մի ոգի, որ ի վերջո հայոց շերեփը պողպատի վերածեց:

Սպացուց Սարգսրապատը մեր: Ապացուց նորածին պետությունը մեր, ապացուց պերճ ու հզոր՝ արդի Մայր Հայաստանը մեր:

Անենայն հայոց մայր հայրենիքի վերածնունդի ուրախությամբ և հանուն գալիք օրերի հայրենի առավել պայծառության ու շենության, մարտում ենք հավերժական լույս և փառք՝ Հայոց Հայրիկի անթառամ հիշատակին: Ամեն:

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԲԱԺԻՆ

Տասը րոպե ընդմիջումից հետո սկսվում է հանդեսի գեղարվեստական մասը:

Մայր տաճարի երգչախումբը, Խորեն Մեխակենցյանի ղեկավարությամբ, կատարում է հետևյալ խմբերգերը. «Լոռեց. ամպերը եկան...», «Տեր կեցո Դու գհայս» (Մ. Եկմաբյան), «Ազգ փառապանծ» (Ա. Բաբաջանյան), «Տեր ողորմես» (Պ. Չալկովսկի), «Ալեյուիա» (Հենդել), «Էջ Միածինն ի Հօրե» շարականը (մշակումը՝ Խ. Մեխակենցյանի):

Հազարոս սրկ. Կյուրեղյանը հատվածներ է արտասանում Խորմյան Հայրիկի «Պապիկ և Թոռնիկ»-ից, հոգևոր Անմարանի Ա լսարանի ուսանող Վրեժ Նաջարյանը՝ Սիամանյոյի «Խրիմյան Հայրիկ» բանաստեղծությունը:

Մայր տաճարի երգչախմբի մենակատար, երգչուհի Նորա Մեղրումյանը, դաշնակահարուհի Համիկ Տեր-Սիմոնյանի նվագակցությամբ, բարձր արվեստով կատարում է. Օհմենայի արիան՝ «Թող հոսեն իմ արցունքները»:

«Սիդ» օպերայից (Մասնե), «Պասկալ և կրոր պար» (Ռ. Մեխիքյան) և «Պաղ աղբյուրի մոտ» (Մ. Եկմաբյան) երգերը:

Այնուհետև իր հմայիչ արվեստով հանդես է գալիս Հայաստանի հանրապետության ժողովրդական երգիչ Հովհաննես Բադալյանը և երգում է Վասպուրականի ժողովրդական հետևյալ երգերը. «Հայրիկ, Հայրիկ», «Դիւ յառան», «Վանեցիների ողբը», «Սուկե Տիգրան»:

Հանրապետության վաստակավոր երգչուհի Լուսինե Զաքարյանը ինչպես միշտ, այս անգամ ևս իր հմայիչ արվեստով գերում է հանդիսականներին հետևյալ երգերի կատարմամբ. «Ալկե, Մարիա» (Գերոսիմի), «Ալագյազ» (Կոմիտաս վարդապետ), «Յար Նազանի» (Ա. Հովհաննես): Դաշնամուրի վրա նվագակցում է վաստակավոր արտիստուհի Մարիաննա Հարությունյանը:

Վերջում հանդես է գալիս Հայաստանի ռադիոյի և հեռուստատեսության պետական պատանի ջութակահարների համույթը՝ ղեկավարությամբ արվեստի վաստակավոր գործիչ Գևորգ Աճեմյանի: Խումբը կատարում է «Այսօր տոն է», «Խնկի ծառին» շարականները, «Սերենադ» (Ծուրերտ), «Նեապոլիտանական երգ» և «Երկու կիթառ» ստեղծագործությունները: Դաշնամուրի վրա նվագակցում է Զեյնե Զաքարյանը:

Այնուհետև հանդիսականները դիտում են «Մեռնօրհներեի արարողությունը Մայր Աթոռում 1969 թվին» վավերագրական գունավոր ֆիլմը:

Խանդավառ մթնոլորտում հանդիսությունը վերջանում է երեկոյան ժամը 23-ին և մեծ գոհունակություն պատճառում ներկաներին:

